«Հաստատում եմ»
«ՀԱՅԵԼԱԽԱԳԻՏ ԲԲԸ»
տնօրեն՝ _____ Գ. Ս. Ազիզյան
«__» _____2021թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԷՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

"Կայուն ճարտարապետության խնդիրները Հայաստանի Հանրապետության ժամանակակից հասարակական շենքերում" թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԸ.00.01- «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

"Կայուն ճարտարապետություն" եզրույթը քաղաքաշինական արդի այն բանաձևումն է, որով դրսևորվում և բնորոշվում է բնակավայրի առողջ կենսամիջավայրն ու նրա մշակութային ընդհանրական դիմագիծը: Դարեր շարունակ և ընդհուպ մինչև 20-րդ դարը այդ խնդիրը այս կամ այն չափ ապահովվել է շնորհիվ նրա, որ քաղաքաշինական կենսամիջավայրի ձևավորումը թելադրված է եղել տարածաշրջաններում առկա բնական շինանյութերի տեսականու՝ քարի, փայտի, նաև կավի ու կրի տեկտոնիկ հնարավորություններով: Վիճակը կտրուկ սրվեց 20-րդ դարասկզբին, երբ այդ նյութերին եկան փոխարինելու երկաթբետոնը, մետաղը, ապակին, արհեստածին այլ շինանյութերն ու ինժեներական ենթակառուցվածքների նորամուծությունները: Տեխնիկական այդ նորամուծությունների հարաճուն զարգացումները հանգեցրին նրան, որ բնակելի և հասարակական շենքերի բազմահարկ կառուցապատումը վերածվեց ամենաեկամտաբեր բիզնեսի, շնորհիվ նրա, որ նախկինում կառուցապված տարածքներում առկա ցածրահարկ կառույցների հողակտորներում հնարավորություն էր ստեղծվում կառուցել բազմահարկ ու խիստ շահութաբեր երկնաքերեր: Այս գործընթացը սկզբնավորվեց ԱՄՆ-ում, որը կաշկանդված չէր պատմաճարտարապետական ժառանգության պահպանման խնդիրներով, այնուհետև տարածում ստացավ այլ, գլխավորապես թերզարգացած երկրներում: Հայաստանում այն ներմուծվեց անցյալ դարի 60-ականներին, երբ կյանքի կոչվեց տիպարային բնակելի և հասարակական շենքերի կառուցապատման համատարած սկզբունքը: Թեև այդ սկզբունքը, շնորհիվ կառավարության ողջամիտ ուղղորդման, կենսամիջավայրի վրա էական ազդեցություն չունեցավ, այնուամենայնիվ այն խոչընդոտեց այդ նույն միջավայրի կայուն ճարտարապետության մշակութային դիմագծի ձևավորումը:

Հայաստանում ու հատկապես մայրաքաղաք Երևանում ամեն ինչ կտրուկ շրջվեց վերջին 30 տարիների ընթացքում, երբ տնտեսության հապճեպ ազատականացման և դեպի շուկայական տնտեսավարմանն անցնելու գործընթացում, երկիրը հայտնվեց տնտեսական փլուզման մեջ, որից դուրս գալու միակ միջոցը համարվեց երկրի պետական անշարժ գույք հանդիսացող բոլոր կարգի, այդ թվում պատմաճարտարապետական հուշարձաններ հանդիսացող շենքերի ու շինությունների համատարած սեփականաշնորհումը, դրանց պահպանման ու հետագա օգտագործման ճակատագրերի անտեսմամբ: Երկրի երբեմնի հզոր արտադրական

ձեռնարկությունների անէացման պայմաններում, որպես միակ ներդրումային աղբյուր հանդիսացան արագ շահույթ ակնկալող մեծահարուստ գործարարներն ու "բիրդան աղաները", որոնք մտահոգված էին ոչ այնքան երկրի տնտեսության վերականգնմամբ, որքան հանրային լայն պահանջարկ ունեցող բնակելի և հասարակական եկամտաբեր շենքերի ու շինությունների կառուցման ֆինանսավորմամբ, պայմանով սակայն, որ կառույցի ծավալն ու տեղի ընտրությունը որոշելու են իրենք և որ իրենց նախաձեռնությունը չպետք է խոչընդոտվի տարածքում առկա ցածրահարկ կառույցների իրացման ու ծավալատարածական լուծումների սահմանափակումներով: Այս պահանջին ընդառաջ նորամուտ կառավարիչները նախաձեռնեցին և կայացրին պետական որոշում, որով հրահանգվեց քաղաքաշինական մեծածավալ ներդրումային ծրագրերը դիտարկել որպես՝ Պետական Գերակա Շահ:

Այդ որոշման հետևանքներն են Երևանի պատմական կենտրոնի քաղաքաշինական երբեմնի հիասքանչ կենսամիջավայրի ներկայիս անդարձելի խեղումներն ու Կայուն ճարտարապետության զաղափարախոսության հետ որևէ եզրեր չունեցող մշակութային աղավաղումները:

"Կայուն ճարտարապետությունը Հայաստանի Հանրապետության ժամանակակից հասարակական շենքերում" ատենախոսությունը թերևս առաջիններից է, որտեղ համեստորեն, բայց և ամենայն մանրամասնությամբ քննարկվում և ցուցադրվում է քաղաքաշինությունում ճարտարապետի մասնագիտական դերակատարման կարևոր ուղղություններից մեկը, որն առավել կիրառական է պատմաճարտարապետական նշանակալի միջավայր ունեցող բնակավայրերում: Որպես կայուն ճարտարապետությանը նպաստող ընդունելի օրինակներ, ատենախոսությունում անդրադարձ է կատարվել վերջին տասնամյակում Երևանում, Գյումրիում, Դիլիջանում, նաև արտերկրներում իրականացված հասարակական կառույցներին, որոնք ներառվել են բնակավայրում պատմականորեն ձևավորված կառուցապատման միջավայրերում, նկարագրված են նրանցում կայուն ճարտարապետության պահանջներն ապահովող տարբերակված մոտեցումներն ու քննության են առնված հնի և նորի համատեղության ընկալելի սկզբունքները: Գովելի է, որ ատենախոսի կողմից նշվում են նաև այդ մոտեցումներում առկա և հաջողությունները և թերացումները: Ուշադրության է արժանի նաև այն, որ ատենախոսը կայուն ճարտարապետության խնդիրների ապահովման համար միանգամայն օբյեկտիվորեն անդրադառնում է քաղաքաշինության բնագավառի գործող օրենսդրական դաշտում որոշակի փոփոխությունների ու լրացումների անհրաժեշտությանը, որոնցով կհստակեցվեն կառուցապատումներում միջամտության սահմանափակումներն ու թույլատրելի չափորոշիչները:

Ատենախոսության արդիականությունը անվիճելի է, ավելին՝ գտնում եմ, որ Կայուն ճարտարապետության թեման ընդհանրապես պետք է ներառվի ԲՈՒՀ-ի կրթական ծրագրում, իբրև առաջնային պահանջարկ հանդիսացող ուսուցում՝ կանխարգելելու համար մեր բնակավայրերի պատմաճարտարապետական միջավայրերում հաճախակի արտահայտվող, կարելի է ասել՝ սիրողականության և ինքնակամության դրսևորումները:

ՀՀ վաստակավոր ճարտարապետ
ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր Սաշուր ՔԱԼԱՇՅԱՆ